



ՔԱՂԱՔԱՅԻԱԿԱՆ ԱՎԻԱՅԻԱՅԻ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀ

«01» հունիս 2023թ.

ՀՐԱՄԱՆ N 236-Ն

«ՎԻՉ ԷՅՐ ՄԱԼԹԱ» ԱՎԻԱԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔ, ՏԱՐԱԾՔԻ ՆԵՐՍՈՒՄ ԵՎ ՏԱՐԱԾՔԻՑ ԴՈՒՐՍ ԵՐԿՈՒ ԵՎ ԱՎԵԼԻ ՈՉ ԿԱՆՈՆԱՎՈՐ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ՕԴԱՅԻՆ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ԵՎ «ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ 29-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ «2» ԿԵՏՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Պետական տուրքի մասին» օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի «գ» կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի դեկտեմբերի 26-ի թիվ 1936-Ն որոշման հավելվածով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի օգոստոսի 6-ի թիվ 1005-Ն որոշման N 2 հավելվածի 18-րդ կետով և հիմք ընդունելով «Վիզ Էյր Մալթա» ավիաընկերության 2023 թվականի մայիսի 17-ի հայտը.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. «Վիզ Էյր Մալթա» ավիաընկերությանը (այսուհետ՝ Ընկերություն) տրամադրել Հռոմ/LIRF/-Երևան/UDYZ/-Հռոմ/LIRF/ երթուղով՝ 2023 թվականի հուլիսի 5-ից մինչև 2023 թվականի հոկտեմբերի 25-ը՝ շաբաթական 1 (մեկ) չվերթ հաճախականությամբ Հայաստանի Հանրապետության տարածք, տարածքի ներսում և տարածքից դուրս երկու և ավելի ոչ կանոնավոր առևտրային օդային հաղորդակցությունների իրականացման թույլտվություն:

2. Սահմանել, որ սույն հրամանի 1-ին կետով նախատեսված Հռոմ/LIRF/-Երևան/UDYZ/-Հռոմ/LIRF/ երթուղով չվերթները համարվում են Քաղաքացիական ավիացիայի կոմիտեի

նախագահի 2023 թվականի ապրիլի 28-ի N 171-Ա հրամանով տրված թույլտվության շրջանակներում Հռոմ/LIRF/-Երևան/UDYZ/-Հռոմ/LIRF/ երթուղով իրականացվող չվերթների շարունակությունը (ԻԱՏԱ) 2023 թվականի ամառային նավիգացիոն ժամանակահատվածում՝ 2023 թվականի հուլիսի 5-ից մինչև 2023 թվականի հոկտեմբերի 25-ը՝ շաբաթական 1 (մեկ) չվերթ հաճախականությամբ, որոնք բավարարում են Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի դեկտեմբերի 26-ի թիվ 1936-Ն որոշման հավելվածով նախատեսված պայմանների, չսպասարկված ուղղությունների և չվերթների հաճախականությունների պահանջներին և որոնց վրա տարածվում են Քաղաքացիական ավիացիայի կոմիտեի նախագահի 2023 թվականի ապրիլի 28-ի N 171-Ա հրամանի 2-րդ կետով նախատեսված արտոնությունը:

3. Օդային տրանսպորտի միջազգային ասոցիացիայի (ԻԱՏԱ) ձմեռային ժամանակահատվածի մասով արտոնության վերաբերյալ դրույթները կսահմանվեն առանձին հրամանով՝ Ընկերության կողմից ներկայացվող հայտի հիման վրա:

4. Կոմիտեի նախագահի օգնականին՝ սահմանված կարգով ապահովել սույն հրամանի և թույլտվության տեղադրումը Կոմիտեի պաշտոնական կայքէջում:

5. Կոմիտեի օդային փոխադրումների կարգավորման վարչության պետին՝ սահմանված կարգով ապահովել սույն հրամանով նախատեսված թույլտվության հանձնումն Ընկերությանը:

6/1/2023

X 

ՄԻՀՐԱՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Signed by: KHACHATRYAN MIHRAN 3308540266 ՄԻՀՐԱՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ 930/310523

ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՕԴԱՆԱՎ ՇԱՀԱԳՈՐԾՈՂԻ ԿՈՂՄԻՑ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՏԱՐԱԾՔ, ՏԱՐԱԾՔԻ ՆԵՐՍՈՒՄ ԵՎ ՏԱՐԱԾՔԻՑ ԴՈՒՐՄ ԵՐԿՈՒ ԵՎ ԱՎԵԼԻ ՈՉ ԿԱՆՈՆԱՎՈՐ
ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ՕԴԱՅԻՆ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ

PERMISSION 930/310523

TO THE FOREIGN AIRCRAFT OPERATOR FOR TWO AND MORE
CHARTER SERVICES OPERATION TO, FROM AND WITHIN THE TERRITORY OF THE REPUBLIC OF
ARMENIA

Օդանավ շահագործողը
Aircraft Operator

«Վիզ Էյր Մալթա» ՍՊԸ
"Wizz Air Malta" Limited

Օդանավի (օդանավերի) տիպը
(տիպերը)
Type(s) of aircraft(s)

A320 (320, Y180), A320 (320, Y186), A321 (321, Y230),
A320neo (32N, Y186), A321neo (32Q, Y239)

Հաճախականությունը
Frequency

շաբաթական 1 չվերթ
1 flight per week

Երթուղին
Air route

Հռոմ/LIRF/-Երևան/UDYZ/-Հռոմ/LIRF/
Rome/LIRF/-Yerevan/UDYZ/-Rome/LIRF/

Թույլտվության գործողության
ժամկետը
Permission validity

05/07/2023 մինչև 25/10/2023
05/07/2023 till 25/10/2023

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ
ԱՎԻԱՑԻԱՅԻ ԿՈՄԻՏԵԻ
ՆԱԽԱԳԱՀ
ՄԻՀՐԱՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ
CHAIR OF CIVIL
AVIATION COMMITTEE
MIHRAN KHACHATRYAN

6/1/2023

X 

ՄԻՀՐԱՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Signed by: KHACHATRYAN MIHRAN 3308540266



01.06.2023

(տալու ամսաթիվը)
(date of issue)